ների. անմեղ մարդկանց քմահաճօրէն գնդակահարելը սովորական երևոյթ է դարձել: Փորձեցինք համաձայնութեան գալ Ազրբէջանի հետ, բանակցութիւններ սկսեցինք, կոնֆերանս պիտի գումարէինք, բայց բանակցող արտակարգ լիազօր Հիւսէյնովը յանկարծակի Թիֆլիսից Բաքուի վրայով մեկնեց Մոսկուա...

Ա. Աբեղեան (դաշն.). — Գնացել է «կոմունիստներ» բերելու (ծիծաղ տեղերից):

Նախարարապետ. — Դուք կարդացիք լրագրներում, որ սովետական Ռուսաստանը ցանկութիւն է յայտնել լինել իրաւարար Հայաստանի և Տաճկաստանի միջև, (Վ. Նաւասարդեան տեղից «մեզ վրա սիրահարուել են»):

. . . . . .

Բայց նրանք խօսքից գործի են անցել: Նրանց խօսքի և գործի մէջ մեծ տարբերութիւն կայ: Խօսքով ամէն ինչ մեզ համար լաւ է, բայց գործով... Նրանք գրաւում են մեր տերիտորիայի անվիճելի մասերը՝ Զանգեզուրը, Ղարաբաղը և որպէսզի արիւնհեղութիւն չը լինի... տալիս են Ազրբէջանին:

Արդէն անեկդոտ է դարձել, թէ Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեանը միայն նօտաներով է բողոքում... Մենք ցոյց կը տանք, որ հայ ժողովուրդը գիտէ բանակցել ոչ միայն խօսքով, այլ նաև զէնքով: Ես հաւատ ունեմ աւելի ապահովել մեր երկիրը նախ խօսքով և ապա միայն զէնքով՝ բանակցելով մեր դրացիների և խօսքով բարեկամների հետ: Վերջապէս պարզ է, որ Ռուսաստանը ձգտում է գրաւել Օլթի, Կարս, Դարալագեազ: Ես հաւատացած եմ, որ նման երազկոտութիւն յօդս կը ցնդի: Մեր ժողովուրդը և բանակը ոտքի են կանգնել և մահուան գնով որոշել են ազատ ապրել (որոտընդոստ ծափեր):

Փ.—Նախագահ Ա. Սահակեանը յայտարարում է 10 րոպէ ընդմիջում:

Ընդմիջումից յետոյ, ժամը 9-ից 30 րոպէ անց, փոխ-նախագահը յայտարարում է նիստը վերաբացուած: Խորհրդարանը քէֆարկութեամբ որոշում է քննութեան առնել նախարարապետի զեկուցումը: Խօսք է առնում պատգամաւոր Ն. Աղբալեանը. —

Նախարարապետ Հ. Օհանջանեանի ընդարձակ և բազմակողմանի զեկուցումն իր բովանդակ ծաւալով քննութեան առնելու նպատակ չունեմ: Զեկուցումից երևաց, որ խորհրդարանի բացման նախօրեակին մօտ էր հերթական խնդրի իրականացումը՝ Զուլֆա երկաթուղագծի բացումը Հայաստանից դէպի Պարսկաստան: Մի չարաբաստիկ հանգամանք միայն խանգարեց կառավարութեանը անելու մեզ, Հայաստանի խորհրդարանին, այդ ընծան: Բայց մենք հաւատացած ենք, որ այդ մօտ օրերի խնդիր լինելով՝ շուտով կիրագործուի:

Այս կարճ ժամանակաւոր ընթացքում շատ մեծ գործ է կատարուել, մեր ռազմական ճակատները խոշոր չափով կրճատուած են և սակաւաթիւ զօրքով պահպանուել է մեր հայրենիքը, և նոյնիսկ տիրացել ենք մեր հայրենիքի անբաժան մասերին: Կառավարութիւնը կարողացաւ ապացուցել, որ թաթարը մեզ համար վնասակար չէ: Թաթարների այդ բազմութիւնն այլ ևս անարժէք է մեզ համար և մենք անհրաժեշտ պէտք է պատմական խնդիրները լուծենք: Ներքին ուժերը յաղթահարուած են ընդմիշտ՝ յետադայ խնդիրների լուծմանը յաջողապէս հասնելու համար: Մօտ է այն օրը, երբ մեր հարևան Ազրբէջանը պիտի համոզուի, որ իր սարքած բոլոր խաղերն ի զուր են և